



## 208. ՄԵՆԱԿԹԱՅՆ ՈՒ ՔԱՄԻՆ

Մի մենակյաց քառասում տարի մի տեղ ճգնած է լինում ու ապրում իր համար։ Մի օր էլ նա դուրս է գալիս իր քարանձավի բակն ու ինքն իրենով պարծենում, թե ես այլևս վախ չունեմ ոչընշից, բացի աստծուց։ Հանկարծ նա տեսնում է, որ իր առաջ խաղում է մի թեթև պտուտահողմ։ Նա զարմանքով տեսնում է, որ պտուտահողմը լեզու առավ և սկսեց խոսել։

—Ռ' մարդ,—ասաց քամին,—դու ասում ես, որ մենակ աստցծուց վախ ունես, իսկ ուրիշ բանից չունե՞ս։

—Ռ' քամի, միայն աստծուց ունեմ,—պատասխանում է մենակյացը։

—Լա՛վ, —ասում է քամին և թռչում ուրիշ տեղեր։

Մյուս առավտորը մենակյացը քաղաք է իշնում այն մտադրությամբ, որ վերջին անգամ տեսնի քաղաքն ու էլ ետ իր քարանձավը վերագունաւ։ Մի մսագործի խանութի առաջ կանգնում է ու դիտում ներսու։ Մսագործը նրա աղքատ ու պատառութված հագուստներից եղրակացնում է, որ սա մուրացկան է և ոչխարի մի գլուխ ու ոտներ է տալիս մենակյացին։ Սա ոտներն ու գլուխն առնում է այն մտադրությամբ, որ մի աղքատ կպատահի ու կտանրան։ Մակայն մինչև իր անձավը գալը ոչ մի աղքատ լի պատահում և ստիպված ոտներն ու գլուխը ձեռքին մտնում է իր բնակարանը։

Մյուս առավտորը, երբ գնում է մոտակա առմից ջուր բերելու, գալիս տեսնում է իր քարանձավի առաջ արքայական զինվորներ,

ամենի ձիեր հեծած իրեն են ման գալիս։ Մենակյացին իսկույն ձերբակալում են, ձեռները կապուտում ու քշում թագավորի մոտ։ Դու մի ասիր, հենց էդ զիշեր թագավորի ավագ գանձապահի զլուխը կտրել են ու գանձերը տարիլ, և թագավորը հրամայել է գտնել իր հավատարիմ գանձապահի զլուխը, ման զալով եկել են և մենակյացի քարանձավում գտել գանձապահի զլուխը։ «Մարդասպանին տանում են թագավորի մոտ։ Թագավորն սպառնագին հարց ու փորձ է անում, թե դու ինչ մարդ ես և ինչպես ես սպանել գանձապահին, այժմ ո՞րտեղ են գանձերը։ Մենակյացն ընկնում է թագավորի ոտները, աղաջում, պաղատում, թե ես մի խեղճ նքնավոր եմ և ոչ թե մարդասպան։ Թագավորը հրամայում է բերել և ցույց տալ գանձապահի զլուխը, Կից սինյակից, որտեղ լինում են միայն գլխատված մարդկանց զլուխները, դուրս են հանում գանձապահի զլուխն, ու զորապետը հայտնում է թագավորին, որ այս գտել ենք այդ մենակյացի քարանձավում, որ դա ոչ թե մենակյաց է, այլ մի սոսկալի շարագործ ավաղակ։ Մենակյացը դարձյալ աղաջում-պաղատում է, որ ինքը չի արել այդ թագավորը հրամայում է բանտ գնել, որ առավոտը պիտի գլխատեն։

Մենակյացին բանտ են տանում։ Ճանապարհին երևում է նույն քամին։ Դեռ քամին շտեսած, ճգնավորը մրմնջում է։—Ռվագատված, քո խոնարհ ծառան եմ, միայն դու կարող ես ինձ փըրկել։

—Ռվ, միայն ես կարող եմ քեզ փրկել, —ասում է պտուտահողմը։ Մենակյացը ճանաշում է իր վաղեմի հողմը և լուր գնում։ Հողմը թոշում է ուրիշ տեղի։

Առավոտը մինչև զլխատելը թագավորն իր մոտ է կանչում ու մարդասպանին՝ վերջին քննության։ Եվ այստեղ մենակյացը աղերսագին պատմում է, որ ինքը մի ոշխարի զլուխ ու ոտքեր է ունեցել, որն իրեն է նվիրել մսագործ և մանրամասն հայտնում է զլխի նշանները։ Թագավորը հրամայում է բերել գանձապահի զլուխը։ Բերում են, դուրս է գալիս ոշխարի զլուխ, մենակյացի հայտնած նշաններով։

Հենց այդ ժամանակ ներս է մտնում մունետիկը և հայտնում։—Տեր թագավոր, զտնված է գանձապահի զլուխն ու ողջ գանձերը և շարագործին բերում են։

Մենակյացին նվիրներով աղատում են։ Սա, ոտները քաշ տալով, իր բնակարանի դուռն է հասնում և նստում մի քարի վրա, մրմնջալով։—Տեր աստված, ո՞ւր մնաց քո զորությունը, հիմա բեղնից վախենամ, թե այդ գիծ հողմից։